«...Գիտական «պայմանավորվածությամբ» պատմագիտական ժանրի սահմանները նեղ հատկանիշներով չեն եզրագծվում, – այս առումով նկատում է Աշոտ Ալեքսանյանը,– որովհետև պատմագրության մեջ, զուտ գեղարվեստական վերարտադրության ոլորտների ժանրային կառույցների հետևողությամբ, ընդհանուր պատումի գեղաձևման պրոցեսում էական տեղ է հատկացվում հեղինակային անհատականությանն ու անկրկնելիությանը: Եվ որքան էլ մի պատմիչը ձգտի նմանվել մեկ ուրիշին, միևնույն է, նրա ստեղծագործությունը մշտապես միջնորդավորված է սեփական անհատական պատմագիտական ու ոճագիտական ըմբռնումների շրջանակով»[7]:

Բացի այս՝ Դավրիժեցին հաճախ է կատարում տվյալ պատմական դրվագին սեփական ներկայության վկայագրումներ՝ վերհանելով նաև աշխատանոցային մանրամասներ: Ինչպես՝ «Եւ դու այսու երկու բանիւ՝ զորս վասն օրինակի գրեցի քեզ՝ զամենայն կիրս վտանգիցն ի միտ ածեալ գիտասցես՝ զոր կրեն քրիստոնեայքն ի յօձաբարոյ ազգէն Պարսից» (էջ 96), «Արդ՝ աստանօր պարտ է մեզ սքանչանալ և հիացմամբ զարմանալ ընդ հատուցումն գործոցս՝ որ կատարեցաւ ի վերայ Մելքիսէթ կաթուղիկոսին» (էջ 188) և այլն: Սա այնպիսի հնարք է, որ յուրովի համադրում է պատմիչին ու գրողին, քանզի այդ կերպ Դավրիժեցին նախ՝ ցուցանում է սեփական վկայագրությունների հավաստիությունը պատմագիտական տեսանկյունից, մյուս կողմից՝ ստեղծում է իր՝ հեղինակի կերպարն ամբողջացնող մանրամասներ, որն արդեն գրական իրողություն է, գրական տեքստի ցուցիչ:

Պարսից» վերնագրով Ե գլխում, և Ավգուստինոս Բաջեցու «Ճանապարհորդութիւն յԵւրոպայ» ուղեգրության համապատասխան հատվածները (տե՛ս «Նշխարք մատենագրութեան հայոց», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 6–9), որն, ըստ Աշոտ Հովհաննիսյանի՝ «հանդիսացել է Առ. Դավրիժեցու աղբյուրներից մեկը» («Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», գիրք երկրորդ, էջ 85):

7 ***Աշոտ Ալեքսանյան,*** Հայ միջնադարյան նամակը (IV–XIV դարեր), էջ 112–113: